ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳԻՐԸ ՆԿԱՐԱԳՐՈՒՄ Է, ԹԵ ՁԵԶ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ Է ՕԳՏԱԳՈՐԾՎԵԼ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ, ԵՎ ԹԵ ԻՆՉՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՅԴ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼ:
ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ՈՒՇԱԴԻՐ ՔՆՆԵԼ:

Ի՞նչ է այս ծանուցագիրը և ինչու՞ անհրաժեշտ է այն

Օրենքի համաձայն, Հարավային Կալիֆորնիայի համալսարանը (University of Southern California, USC)[1] պարտավոր է պաշտպանել գաղտնիությունը Ձեզ ճանաչելի դարձնող բժշկական և այլ առողջական տեղեկությունների («առողջական տեղեկություն»):

Օրենքը նաև USC-ից պահանջում է Ձեզ այս ծանուցագիրը տալով հայտնել, թե ինչպես կարող ենք օգտագործել և դուրս տալ («բացահայտել») Ձեր առողջական տեղեկությունը: USC-ը պարտավոր է հետևել այս ծանուցագրի հիմնական դրույթներին Ձեր առողջական տեղեկությունը օգտագործելու կամ բացահայտելու պահին:

Սա ուժի մեջ կմտնի 2019 թվականի նոյեմբերի 15-ին

USC-ը ինչպես կարող է օգտագործել Ձեր առողջական տեղեկությունը

Որպես ընդհանուր օրենք, պարտավոր եք նախ գրավոր արտոնություն տալ, որպեսզի USC-ը կարողանա օգտագործել կամ բացահայտել Ձեր առողջական տեղեկությունը: Կան որոշակի կացություններ, որտեղ USC-ը պարտավոր չէ ձեռք բերել Ձեր արտոնությունը: Այս բաժինը բացատրում է այն կացությունները, որտեղ USC-ը Ձեր առողջական տեղեկությունը կարող է օգտագործել կամ բացահայտել առանց Ձեր արտոնության:

Բացառությամբ Խիստ գաղտնի տեղեկության (ստորև նկարագրված), USC-ին արտոնվում է Ձեր առողջական տեղեկությունն օգտագործել հետևյալ նպատակներով՝

- **Բուժում՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունն օգտագործում և բացահայտում ենք Ձեզ բժշկական դարմանում կամ ծառայություններ մատուցելու համար: Սա ներառում է օգտագործումներն ու բացահայտումները որպեսզի՝
    - դարմանեն Ձեր հիվանդությունը կամ վնասվածքը, ներառյալ՝ Ձեր դարմանումի մեջ ներգրավված ուրիշ բժիշկների, մասնագետների, բուժքույրերի, տեխնիկների կամ բժշկական անձնակազմի համար կատարված բացահայտումները, կամ
    - կապ հաստատեն Ձեզ հետ ժամադրությունների հիշեցումներ կատարելու համար, կամ
    - տեղեկություն տան Ձեզ բուժման ընտրանքների կամ ուրիշ նպաստների մասին, որոնք առնչվում են առողջապահության և հնարավոր է, որ շահագրգռեն Ձեզ:

---

[1] HIPAA-ի Գաղտնիության կանոնի նպատակներով, USC-ը ներառում է մարմինները, որոնք բաղկացնում են USC-ի Keck Medicin-ը, առանց նշվածներով սահմանափակվելու ընդգրկելով հետևյալները՝ USC Norris Cancer Hospital-ը, USC-ի Keck Hospital-ը, USC-ի համար աշխատող բժիշկները, բուժքույրերը և կլինիկական անձնակազմի այլ անդամներ, USC-ի այն միավորները, որոնք կլինիկական ծառայություններ են մատուցում հետևյալների ծիրում՝ Keck School of Medicine, School of Pharmacy, Herman Ostrow School of Dentistry, Ֆիզիկական և աշխատանքային թերապիա, Suzanne Dworak-Peck School of Social Work, ինչպես նաև USC Care Medical Group, Keck-ի հետ կապ ունեցող բժշկական հիմնարկությունները և նրանց բժիշկները, բուժքույրերը և կլինիկական անձնակազմի անդամները, Engemann Student Health Center-ը, Eric Cohen Student Health Center-ը, USC Verdugo Hills Hospital-ը,նրա բուժքույրերն ու կլինիկական անձնակազմի անդամները, Verdugo Radiology Medical Group-ը, Verdugo Hills Anesthesia-ն և Chandnish K. Ahluwalia, M.D., Inc.-ը և այն միավորները, որոնք աջակցում են կլինիկական և կլինիկական հետազոտության գործառույթներին, ներառյալ՝ Ընդհանուր խորհրդականի, հաշվեքննության և համապատասխանության գրասենյակները:

- **Վճարում՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք օգտագործել և բացահայտել ձեռք բերելու մեր կամ ուրիշների կողմից մատուցված առողջական խնամքի ծառայությունների համար վճարումներ: Սա ներառում է օգտագործումներն ու բացահայտումները որպեսզի՝
    - առողջական տեղեկություն ներկայացնենք և վճարումներ ստանանք Ձեր առողջությունը ապահովագրողից, HMO-ից, կամ ուրիշ ընկերությունից, որը վճարում է Ձեր առողջական խնամքի ծախքի մեկ մասը կամ ամբողջությունը (վճարող), կամ
    - ստուգենք, որ Ձեր վճարողը կվճարի Ձեր առողջական խնամքի համար:

  Այնուամենայնիվ, մենք կհարգենք առողջական տեղեկությունը Ձեր առողջապահական ծրագրին չբացահայտելու Ձեր խնդրանքը, եթե տեղեկությունը վերաբերում է միայն առողջական խնամքի տարրի կամ ծառայության, որի համար մեզ լրիվ վճարում է կատարվել Ձեր գրպանից:

- **Առողջական խնամքի գործողություններ՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք օգտագործել և բացահայտել մեր առողջական խնամքի գործողությունների համար, ինչպես՝ ներքին կառավարումը և ծրագրումը, որը բարելավում է մեր Ձեզ մատուցած խնամքի որակը և ծախքի արդյունավետությունը: Սա ներառում է նաև օգտագործումներն ու բացահայտումները որպեսզի՝
    - գնահատենք որակն ու ունակությունը մեր առողջական խնամքի մատակարարներին, բուժքույրերին և առողջական խնամքի այլ ծառայողների,
    - օգնենք, որ առողջական խնամքի ուրիշ մատակարարներ անցկացնեն որակի իրենց սեփական վերանայումները, համապատասխանության գործունեությունները կամ ուրիշ առողջական խնամքի գործողություններ,
    - մարզենք ուսանողներ, վերահսկողությամբ գործող շրջանավարտներ և հետևողներ, կամ
    - գտնենք առողջությանը առնչվող ծառայություններ և արտադրանքներ, որոնք կարող են օգտակար լինել Ձեր առողջության և այնուհետև կապ հաստատենք Ձեզ հետ այդ ծառայությունների և արտադրանքների մասին:

Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք նաև բացահայտել երրորդ կողմերի, որպեսզի մեզ օգնեն այս գործունեություններում (բայց միայն եթե գրավոր համաձայնվեն պահպանել Ձեր առողջական տեղեկության գաղտնիությունը):

Ի հավելումն, USC-ը կարող է Ձեր առողջական տեղեկությունը օգտագործել և բացահայտել հետևյալ հանգամանքների ներքո՝

- **Կազմակերպված առողջական խնամքի կարգադրություն:** USC-ը մասնակցում է կազմակերպված առողջական խնամքի կարգադրությունների (OHCA) ուրիշ մատակարարների հետ, առանց նշվածներով սահմանափակվելու ներառելով՝ Childrens Hospital Los Angeles-ը և Los Angeles County+USC Medical Center-ը (LAC+USC): USC-ը տեղեկությունը կարող է կիսել իր OHCA-ի անդամների հետ՝ բուժման, վճարման և համատեղ առողջական խնամքի գործողությունների համար:

- **Հասցեացանկ՝** USC-ը կարող է Ձեր անունը, իր հիվանդանոցներում գտնված վայրը, ընդհանուր առողջական վիճակը և կրոնական պատկանելությունը ընդգրկել հիվանդների հասցեացանկում առանց լիազորում ձեռք բերելու, բացի եթե առարկեք հասցեացանկում ընդգրկվելու դեմ: Հասցեացանկի տեղեկությունը կարող է բացահայտվել որևէ անձի, որը Ձեզ է հարցնում անունով, կամ որևէ հոգևորականի, պայմանով, սակայն, որ Ձեր կրոնական պատկանելությունը կբացահայտվի միայն հոգևորականներին:

- **Բարեկամներ, Խնամատուներ և Անձնական ներկայացուցիչներ՝** Պատշաճ հանգամանքների ներքո, ներառյալ՝ արտակարգ իրավիճակները, մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել ընտանիքի անդամների, խնամատուների կամ անձնական ներկայացուցիչների, ովքեր Ձեզ հետ են կամ ներկայանում են Ձեր անունով (օրինակ՝ դեղատոմս վերցնելու համար): Թերևս նաև անհրաժեշտ լինի, որ այդպիսի անձանց հայտնենք մեր հաստատության մեջ Ձեր գտնված վայրը և ընդհանուր վիճակը: Եթե առարկություն ունեք այսպիսի բացահայտումների դեմ, խնդրում ենք իմաց տալ Ձեր USC-ի առողջական խնամքի մատակարարին: Եթե ներկա չեք, կամ օգտագործման կամ բացահայտման համաձայնվելու կամ առարկելու հնարավորությունը գործնականորեն իրագործելի չէ Ձեր անկարողության կամ արտակարգ իրավիճակի հանգամանքի պատճառով, մենք կարող ենք պրոֆեսիոնալ դատողություն կիրառելով որոշել, որ արդյո՞ք բացահայտումը ծառայում է Ձեր շահերին: Եթե տեղեկությունը բացահայտվի ընտանիքի անդամի, ուրիշ բարեկամի կամ մոտիկ անձնական ընկերոջ, մենք կբացահայտենք միայն այն տեղեկությունը, որը մեր համոզումով ուղղակի կարևոր է անձի մասնակցությանը համար Ձեր առողջական խնամքին կամ Ձեր առողջական խնամքին վերաբերող վճարման:

- **Հանրային առողջապահական գործունեություններ՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել հետևյալ հանրային առողջապահական գործունեությունների համար՝
    - Զեկուցելու հանրային առողջապահության իշխանություններին հիվանդության, վնասվածքի կամ հաշմանդամության կանխարգելման կամ կառավարման նպատակով.
    - Երեխայի չարաշահումը և անտեսումը զեկուցելու հանրային առողջապահության իշխանություններին կամ ուրիշ կառավարական իշխանությունների, որոնք օրենքի լիազորումով կարող են ստանալ այդպիսի զեկուցումներ.
    - Տեղեկություն զեկուցելու ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչության (Food and Drug Administration, FDA) նրա իրավասության ենթակա արտադրանքների և ծառայությունների մասին.
    - Զգուշացնելու անձին, ով թերևս ենթարկվել է փոխանցելի հիվանդության կամ այլապես ենթակա է ինչ-որ հիվանդություն ստանալու կամ տարածելու վտանգի. կամ
    - Տեղեկություն զեկուցելու Ձեր գործատուին, ինչպես պահանջվում է օրենքների ներքո, որոնք զբաղվում են աշխատանքի հետ կապված հիվանդություններով և վնասվածքներով, կամ աշխատատեղում բժշկական վերահսկողության համար:

- **Չարաշահման, անտեսման կամ տնային բռնության զոհեր՝** Եթե մենք տրամաբանորեն համոզված լինենք, որ Դուք զոհն եք չարաշահման, անտեսման կամ տնային բռնության, մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել, ինչպես օրենքն է պահանջում, սոցիալական ծառայությունների կամ ուրիշ կառավարական գործակալության, որին օրենքը լիազորել է ստանալ այդպիսի զեկույցներ:

- **Առողջապահության հսկողության գործունեություններ՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել առողջապահությունը հսկող գործակալության, որին վստահվել է պատասխանատվությունը կառավարական առողջապահական ծրագրերի կանոնների հարգումը երաշխավորելու, ինչպես՝ Medicare-ը կամ Medicaid-ը:

- **Մասնագիտացված կառավարական գործառույթներ՝** Մենք Ձեր առողջական տեղեկությունը կարող ենք օգտագործել և բացահայտել կառավարական հատուկ գործառույթներ ունեցող գործակալությունների, ինչպես՝ ԱՄՆ զինուժը, օրենքով պահանջված որոշակի հանգամանքների ներքո:

- **Իրավապահ աշխատակիցներ, դատական և վարչական դատավարություններ՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել ոստիկանության կամ իրավապահ ուրիշ աշխատակիցների: Մենք առողջական տեղեկությունը կարող ենք նաև բացահայտել դատական կամ վարչական դատավարություններում, ինչպես՝ ի պատասխան դատական ծանուցագրի:

- **Դատաքննիչներ և բժշկական քննիչներ՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել դատաքննչի կամ բժշկական քննչի՝ ըստ օրենքի պահանջմունքի:

- **Օրգանի և հյուսվածքի նվիրատվություն՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել կազմակերպությունների, որոնք օգնում են օրգանի, աչքի կամ հյուսվածքի նվիրատվության, մթերման կամ փոխպատվաստման:

- **Առողջապահություն կամ անվտանգություն՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել կանխարգելելու համար լուրջ վտանգը Ձեր առողջության կամ անվտանգության կամ հանրության կամ ուրիշ անձի առողջության և անվտանգության:

- **Առողջական տեղեկության փոխանակում՝** Լոս Անջելեսի տարածքում ուրիշ առողջական խնամքի մատակարարների կողքին, մենք կարող ենք մասնակցել մեկ կամ ավելի Առողջական տեղեկության փոխանակումների (HIE): HIE-ը համայնքով մեկ տարածված տեղեկատվական համակարգ է, որը օգտագործվում է մասնակից առողջական խնամքի մատակարարների կողմից՝ բուժման նպատակներով կիսելու համար Ձեզ վերաբերող առողջական տեղեկությունը: HIE-ին մասնակցող առողջական խնամքի մատակարարները կարող են Ձեր առողջական տեղեկությունը կիսել էլեկտրոնային միջոցներով: HIE-ը նպատակադրում է տարբեր հաստատություններում Ձեր բուժմանը մասնակցող առողջական խնամքի մատակարարներին թույլ տալ, որ ունենան Ձեզ արդյունավորապես բուժելու համար անհրաժեշտ ողջ տեղեկությունը, ինչպես՝ լաբորատոր անալիզների արդյունքները, նախկին ախտորոշումները և ընթացիկ դեղերը: Եթե չեք ցանկանում Ձեր առողջական տեղեկության կիսվելը HIE-ում, կարող եք հրաժարվել լրացնելով USC HIE-ի Keck Medicine-ի Հիվանդի հրաժարման ձևաթուղթը (Keck Medicine of USC HIE Patient Opt-Out Form):

- **Գիտահետազոտություն.** USC-ն օժանդակում է գիտահետազոտությանը, որը կարող է օգնել հիվանդներին: Այս նպատակի համար մենք, հնարավոր է, օգտագործենք և գաղտնազերծենք Ձեր առողջության հետ կապված տեղեկատվությունը՝ առանց Ձեր նախօրոք համաձայնության: Օրինակ՝

    - Մենք կարող ենք օգտագործել և գաղտնազերծել Ձեր առողջության հետ կապված տեղեկատվությունը գիտահետազոտության արձանագրություն կազմելու նպատակով, գիտահետազոտության հետ կապված որևէ հարց ճշտելու համար, ինչպես նաև որոշելու համար, թե արդյոք USC-ն համապատասխան վայր է այս ակմայն գիտահետազոտության համար:

    - Ձեր տվյալները կարող են օգտագործվել Ձեր՝ գիտահետազոտությանը մասնակցելու իրավասությունը ստուգելու, ինչպես նաև Ձեզ կամ Ձեր բժշկի հետ կապ հաստատելու նպատակով:

    - Մենք կարող է նաև ստեղծենք տվյալների պահոց Ձեր մասին՝ բաց տեղեկատվությամբ:

    Գիտահետազոտության նպատակով Ձեր տվյալների օգտագործումը պետք է ստուգվի և հավանության արժանանա հաստատության քննարկման խորհրդի կողմից, որը զբաղվում է ռիսկերի և շահերի գնահատմամբ: Մենք օգտագործում ենք հիվանդի տվյալները միայն գիտահետազոտության նպատակով՝ գործող օրենքի համաձայն:

- **Սահմանափակ տվյալների հավաքածու.** Մենք, հնարավոր է, Ձեր առոջության հետ կապված բաց տեղեկատվությունը տրամադրենք (բացառելով Ձեր անունը, հասցեն, սոցիալական քարտի համարը կամ այլ անմիջական տվյալներ) գիտահետազոտության նպատակների համար, հանրային առողջության կամ առողջապահական գործողությունների

- **Հետազոտություն՝** Մենք առողջական տեղեկությունը առանց Ձեր լիազորման կարող ենք բացահայտել որոշակի հետազոտական նպատակներով: Օրինակ, մենք Ձեր տեղեկությունը կարող ենք բացահայտել հետազոտողների, ովքեր հետազոտական համաձայնություն են պատրաստում կամ եթե մեր Հիմնարկային վերանայման խորհրդի հանձնաժողովը (որին վստահվել է հետազոտվող անձանց պաշտպանության պատասխանատվությունը) որոշի, որ լիազորումն անհրաժեշտ չէ, եթե որոշակի չափանիշներ բավարարվում են: Մենք Ձեզ վերաբերող առողջական տեղեկություն կարող ենք նաև ներկայացնել (առանց ներառելու Ձեր անունը, հասցեն կամ Ձեզ ուղղակի ճանաչելի դարձնող այլ տվյալներ) հետազոտության, հանրային առողջապահության կամ առողջական խնամքի գործողությունների համար, բայց միայն եթե այդ տեղեկությունն ստացողը ստորագրի տեղեկությունը պաշտպանելու և Ձեզ ճանաչել տալու համար չօգտագործելու համաձայնություն:

- **Զարգացման գործունեություններ՝** Մենք կարող ենք կապ հաստատել Ձեզ հետ՝ USC-ի կարևոր գործունեություններին աջակցելու համար հատկացում խնդրելու նպատակով: Դրամահավաքի համար, մենք կարող ենք մեր դրամահավաքի անձնակազմին բացահայտել Ձեզ վերաբերող ժողովրդագրական տեղեկություն (օրինակ՝ Ձեր անունը, հասցեն և հեռախոսահամարը), մեր կողմից Ձեզ մատուցված առողջական խնամքի ամսաթվերը, ծառայության բաժանմունքի կամ բուժող բժշկի մասին տեղեկություն, արդյունքի մասին տեղեկություն կամ առողջական ապահովագրության կարգավիճակ՝ առանց Ձեր գրավոր արտոնության: Մենք կարող ենք Ձեզ վերաբերող այդպիսի տեղեկությունը նաև կիսել մոտիկ առնչություն ունեցող հիմնադրամների հետ, որոնք օգտակար են դառնում մեր զարգացման գործունեություններին: Մենք Ձեզ հնարավորություն կտանք հրաժարվելու դրամահավաքի հաղորդակցություններն ստանալուց: Մենք, սակայն, չենք բացահայտի Ձեր ախտորոշումը կամ բուժումը, եթե չունենանք այդպես վարվելու Ձեր գրավոր լիազորումը:

- **Շուկայավարման գործունեություններ՝** Մենք կարող ենք իրականացնել հետևյալ գործունեությունները առանց Ձեր լիազորումն ստանալու՝
    - Ձեզ ներկայացնել շուկայավարման նյութեր դեմ-առ-դեմ հանդիպման դրվածքում.
    - Ձեզ տալ անվանական արժեքով գովազդային նվեր.
    - Մատուցել վերալցման հիշեցումներ կամ այլապես հայտնել դեղի կամ կենսաբանական նյութի մասին, որը ներկայումս նշանակվել է Ձեզ համար, այնքան ինչքան հաղորդակցվելու համար մեր ստացած որևէ վճարում տրամաբանորեն համապատասխանում է մեր ծախքերին.
    - Ձեզ հայտնել USC-ի սեփական առողջական խնամքի արտադրանքների և ծառայությունների մասին

Եթե մենք ուրիշ կազմակերպություններից կամ անհատներից վճարումներ ստանանք ի փոխարեն տեղեկության, որը Ձեզ ենք տալիս նրանց առողջական խնամքի արտադրանքների կամ ծառայությունների մասին, մենք կխնդրենք Ձեր լիազորումը, բացի այն պարագաներից, որոնք նկարագրվել են վերևում կամ բացի այն դեպքերից, երբ հաղորդակցությունները թույլ են տրվում օրենքով, առանց Ձեր արտոնության: Մենք Ձեր արտոնությունը կխնդրենք Ձեր առողջական տեղեկության օգտագործման համար որևէ ուրիշ շուկայավարման գործունեության համար: Նույնպես, ժամանակ առ ժամանակ, USC-ը հիվանդներից, նրանց ընտանիքի անդամներից և ընկերներից ստանում է նամակներ, որոնք նկարագրում են USC-ում իրենց ստացած փորձառությունն ու խնամքը: Ըստ հնարավորության, մենք այդ նամակները կիսում ենք մեր USC-ի աշխատակիցների և հիվանդների հետ: Ձեր նամակը կիսելուց առաջ, մենք նամակից կհեռացնենք Ձեր անունը և ուրիշ Ձեզ ճանաչելի դարձնող տեղեկություն՝ Ձեր գաղտնիությունը պաշտպանելու համար:

- **Աշխատավորների հատուցում՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել այնքան ինչքան լիազորվել ենք օրենքով կամ ինչքան դա անհրաժեշտ է հարգելու օրենքը, ինչ վերաբերում է աշխատավորների հատուցման կամ ուրիշ նման ծրագրերի, կամ ինչպես պահանջվում է աշխատատեղերում վնասվածքի կամ հիվանդության վերաբերող օրենքների ներքո:

- **Ինչպես օրենքն է պահանջում՝** Մենք առողջական տեղեկությունը կարող ենք բացահայտել երբ պարտավոր ենք այդպես անել որևէ այլ օրենքով, որը նախորդող կարգերում դեռևս չի վկայակոչվել:

<u>Ձեր գրավոր լիազորումը</u>
ՎԵՐԵՎՈՒՄ ՆԿԱՐԱԳՐՎԱԾՆԵՐԻՑ ՏԱՐԲԵՐ ՈՐԵՎԷ ՆՊԱՏԱԿԻ ՀԱՄԱՐ ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՁԵՐ ՊԱՇՏՊԱՆՎԱԾ ԱՌՈՂՋԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿԱՄ ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵՐԲ ՁԵՐ ԳՐԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒՄՆ ԵՔ ՏԱԼԻՍ ՄԵԶ:

<u>Խիստ խորհրդապահական տեղեկություն</u>

Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են հատուկ գաղտնիության պաշտպանություններ Ձեզ վերաբերող որոշակի խիստ խորհրդապահական տեղեկության համար («Խիստ խորհրդապահական տեղեկություն»), ներառյալ Ձեր առողջական տեղեկությունը, որը պահպանվում է հոգեբուժական գրառումներում կամ վերաբերում է հետևյալին՝ (1) հոգեկան առողջության կամ զարգացական անկարողությունների ծառայություններ. (2) ալկոհոլի և թմրանյութերի չարաշահման կանխարգելում, բուժում և ուղղորդում. (3) ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ստուգում, ախտորոշում կամ բուժում. (4) փոխանցիկ հիվանդություն(ներ). (5) գենետիկական ստուգում. (6) երեխայի չարաշահում և անտեսում. (7) տնային կամ մեծահասակների չարաշահում. կամ (8) սեռական հարձակում: Որպեսզի Ձեր Խիստ խորհրդապահական տեղեկությունը բացահայտվի օրենքով թույլատրվածից տարբեր նպատակներով, պահանջվում է Ձեր գրավոր լիազորումը:

Առողջական տեղեկության վաճառք
Մենք առանց Ձեր գրավոր լիազորման չենք կատարի որևէ բացահայտում, որը համարվում է Ձեր պաշտպանված առողջական տեղեկության վաճառք, բացի այն դեպքից, երբ բացահայտումը կատարվում է օրենքով արտոնված նպատակով:

Ձեր իրավունքները Ձեր առողջական տեղեկության նկատմամբ

Ձեր առողջական տեղեկության հասանելիությունը խնդրելու իրավունք՝ Իրավունք ունեք քննելու և պահպանելու պատճենը հիվանդի արձանագրությունների, որոնք մենք պահպանում ենք որոշումներ կայացնելու համար Ձեր բուժման և խնամքի վերաբերյալ, ներառյալ՝ հաշվական արձանագրությունները: Հասանելիության բոլոր խնդրանքները գրավոր պետք է կատարել: Սահմանափակ հանգամանքների ներքո, մենք կարող ենք մերժել Ձեր արձանագրությունների հասանելիությունը: Եթե ցանկանում եք, որ Ձեր արձանագրությունները հասանելի դառնան Ձեզ, խնդրում ենք Ձեր առողջական խնամքի մատակարարից խնդրել համապատասխան ձևաթուղթը՝ այն լրացնելու համար: Պատճեններ խնդրելու դեպքում, մենք Ձեզանից պատճենների համար կգանձենք տրամաբանական վճար: Մենք նույնպես Ձեզանից կգանձենք դրոշմանիշների ծախքը, եթե խնդրեք, որ պատճենները փոստով ուղարկենք Ձեզ: Եթե ծնողը կամ օրինական խնամակալն եք դեռահասի, դեռահասի բժշկական արձանագրության որոշակի բաժիններ թերևս հասանելի չլինեն Ձեզ Կալիֆորնիայի օրենքի ներքո:

Ձեր առողջական տեղեկության փոփոխությունը խնդրելու իրավունք՝ Իրավունք ունեք խնդրելու, որ փոխենք Ձեր բժշկական արձանագրությունների թղթածրարում կամ հաշվական արձանագրություններում պահպանվող Ձեր առողջական տեղեկությունը: Ձեր արձանագրությունների փոփոխումը ցանկանալու դեպքում, խնդրում ենք Ձեր առողջական խնամքի մատակարարից ձեռք բերել փոփոխման խնդրանքի ձևաթուղթ: Փոփոխման բոլոր խնդրանքները գրավոր պետք է կատարել: Մենք կհարգենք Ձեր խնդրանքը, բացի այն դեպքից, երբ համոզված լինենք, որ փոփոխելի տեղեկությունը դեռևս ճիշտ և ամբողջական է, կամ կիրառելի են ուրիշ հատուկ հանգամանքներ:

Ձեր լիազորումը չեղյալ համարելու իրավունք՝ Կարող եք չեղյալ համարել (հետ առնել) Ձեր պաշտպանված առողջական տեղեկության օգտագործման և բացահայտման համար մեր կողմից ձեռք բերված որևէ գրավոր լիազորում, բացառելով մինչ այդ դրա վրա հենվելով մեր առած քայլերը: Ձեր չեղյալ համարումը պարտավոր է գրավոր լինել և ուղարկվել USC-ի Համապատասխանության գրասենյակ կամ որևէ կողմի, որը նշվել է Ձեր լիազորագրի վրա:

Ձեր առողջական տեղեկության բացահայտումների հաշվետվության իրավունք՝ Գրավոր խնդրանքից հետո, Դուք կարող եք ձեռք բերել ցանկը (հաշվետվությունը) առողջական տեղեկության մեր կողմից կատարված որոշակի բացահայտումների: Ձեր խնդրանքի ժամանակամիջոցը չի կարող գերազանցել վեց տարին: Որևէ տասներկու (12) ամսվա ժամանակամիջոցում մեկից ավելի անգամ հաշվետվություն խնդրելու դեպքում, մենք Ձեզանից տրամաբանական վճար կգանձենք:

Տեղեկությունը Ձեզ ներկայացնելու կերպը խնդրելու իրավունք՝ Կարող եք խնդրել, և մենք կփորձենք ընդառաջել, որևէ տրամաբանական գրավոր խնդրանք, որպեսզի առողջական տեղեկությունը ստանաք հաղորդակցության այլընտրական միջոցներով կամ տարբեր հասցեով կամ վայրում:

Ձեր առողջական տեղեկության չափավորումներ խնդրելու իրավունք՝ Կարող եք խնդրել, որ չափավորենք Ձեր պաշտպանված առողջական տեղեկության օգտագործումն ու բացահայտումը: Այսպիսի չափավորումների բոլոր խնդրանքները գրավոր պետք է կատարել: Չնայած մենք հավելյալ չափավորումների խնդրանքը նկատի կունենանք ուշադրությամբ, մենք պարտավոր չենք համաձայնվել խնդրված չափավորման, բացի տեղեկության՝ առողջապահական մի ծրագրի բացահայտումը չափավորելու խնդրանքից այնպիսի դեպքերում, երբ ծառայության համար վճարումը կատարել եք Ձեր գրպանից և լրիվ:

Խախտման դեպքում ծանուցագիր ստանալու իրավունք՝ Իրավունք ունեք մեր կողմից ծանուցում ստանալու, եթե հայտնաբերենք Ձեր անապահով պաշտպանված առողջական տեղեկության որևէ խախտում:

Այս ծանուցագրի թղթյա օրինակն ստանալու իրավունք՝ Խնդրելուց հետո, կարող եք ստանալ այս Ծանուցագրի թղթյա օրինակը, նույնիսկ եթե համաձայնվել եք այդպիսի տեղեկությունն ստանալ էլեկտրոնային միջոցով:

Այս ծանուցագրի հիմնական դրույթները փոխելու իրավունք

Մենք այս ծանուցագրի հիմնական դրույթները կարող ենք փոխել որևէ ժամանակ: Այս ծանուցագիրը փոխելու դեպքում, մենք կարող ենք մեր ունեցած բոլոր առողջական տեղեկությունների վրա տարածվող՝ ծանուցագրի նոր հիմնական դրույթներ հաստատել, ներառյալ՝ որևէ տեղեկություն, որը ստեղծվել կամ ստացվել է նոր ծանուցագրի թողարկումից առաջ: Այս ծանուցագիրը փոխելու դեպքում, մենք վերամշակված ծանուցագիրը կտեղադրենք մեր գործունեության վայրերում և մեր կայքում՝ www.usc.edu/policies: Որևէ վերամշակյալ ծանուցագիր կարող եք նաև ձեռք բերել դիմելով USC-ի Համապատասխանության գրասենյակ:

Հավելյալ տեղեկություն. Գանգատներ

Եթե ցանկանում եք հավելյալ տեղեկություն ստանալ Ձեր գաղտնիության իրավունքների մասին, մտահոգ եք, որ բռնաբարել ենք Ձեր գաղտնիության իրավունքները, կամ համաձայն չեք Ձեր առողջական տեղեկության հասանելիության վերաբերյալ մեր որոշման հետ, կարող եք դիմել մեր USC-ի Համապատասխանության գրասենյակ: Կարող եք նաև գրավոր գանգատներ ներկայացնել ԱՄՆ առողջապահական և մարդու ծառայությունների Քաղաքացիական իրավունքների գրասենյակի Տնօրենին: Խնդրելուց հետո, USC-ի Համապատասխանության գրասենյակը Ձեզ կտա Տնօրենի ընթացիկ հասցեն: Մենք հակահարված չենք տա Ձեզ՝ մեզ կամ Տնօրենին գանգատ ներկայացնելու դեպքում:

USC-ի Համապատասխանության գրասենյակ

Կարող եք USC-ի Համապատասխանության գրասենյակ դիմել հետևյալ տվյալներով՝ 3500 Figueroa, #105, Los Angeles, CA 900898007, (213) 740-8258 կամ complian@usc.edu:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑԱԳԻՐ

Սա ուժի մեջ կմտնի 2019 թվականի նոյեմբերի 15-ին

Խնդրում ենք ստորագրել և թվագրել ներքևում՝ ցույց տալու համար, որ ստացել եք այս ծանուցագրի պատճենը: Ձեր ստորագրությունը պարզապես հաստատում է, որ ստացել եք այս ծանուցագրի պատճենը:

_____

Տպատառ անունը (Ազգանուն, Անուն, Միջնանվան սկզբնատառ)

_____

Ստորագրությունը

_____

Ամսաթիվը

NOTICE OF PRIVACY PRACTICES
(ARMENIAN)

PATIENT ID